

ՀՏԴ 81՝33Օտար լեզու*Հասմիկ ՂԱԶՈՅԱՆ**ՀԱՊՀ օտար լեզուների ամբիոնի հայցորդ**E-mail: hasmikghajoyan@mail.ru*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՍՏՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Սույն հոդվածում քննության է ենթարկվում տեխնիկական եզրույթների ստեղծման և զարգացման ընթացքը: Տեխնիկայի և գիտության զարգացումը նպաստում են հատուկ մասնագիտական և գիտական եզրույթաբանության կայացմանը: Առաջին եզրույթաբանական աշխատությունները գրվել են ոչ միայն լեզվաբանների, այլ նաև հմուտ ճարտարագետների կողմից, ովքեր իրենց գործունեության ընթացքում բախվել են տեխնիկական եզրույթաբանության անկատարության հետ: Գիտության զարգացումը պահանջում էր եզրույթների ստեղծում: Այս պարագայում անհրաժեշտ էր կատարել խորքային ուսումնասիրություն, հասկանալ տեխնիկայի ոլորտում կիրառվող եզրույթների ծագումնաբանությունն ու իմաստափոխությունը:

Եզրույթաբանության ուսումնասիրությունը առավել հրատապ է դառնում համաշխարհային գլոբալ զարգացումների արդի փուլում: Գիտելիքը ձեռք է բերում համաշխարհային բովանդակություն շնորհիվ համացանցի: Ի հայտ են գալիս գիտական նոր հասկացություններ, որոնք էլ ներթափանցում են լեզվի մեջ և նպաստում տվյալ լեզվի բառապաշարի հարստացմանը:

Սույն հոդվածում մեթոդական հիմք են ծառայել մի շարք բառեր, որոնք կիրառվում են տեխնիկայի ոլորտում: Տեխնիկական եզրույթների ստուգաբանական և իմաստաբանական առանձնահատկությունների ուսումնասիրությունը կարող է բարձրացնել տեխնիկական անգլերենի դասավանդման արդյունավետությունը և հիմք հանդիսանալ տեխնիկական եզրույթների բառարան կազմելու համար:

Բանալի բառեր՝ տեխնիկական եզրույթներ, հասկացություն, եզրույթաբանություն, գիտատեխնիկական, տեղեկատվություն, համակարգիչ, իմաստ, ստեղծում, սահմանում, զարգացում:

А. Каджоян

ИСТОРИЧЕСКИЙ И ЭТИМОЛОГИЧЕСКИЙ ОБЗОР ИЗУЧЕНИЯ ТЕХНИЧЕСКИХ ТЕРМИНОВ

В данной статье рассматривается процесс формирования и развития технических терминов. Развитие техники и науки способствует формированию специальной профессиональной и научной терминологии. Первые терминологические работы были написаны не только лингвистами, но и опытными инженерами, которые в ходе своей деятельности столкнулись с несовершенством технической терминологии.

Развитие науки требовало создания терминов. В этом случае необходимо было провести глубинное исследование, понять происхождение и изменение смысла применяемых в сфере техники терминов. Исследование терминологии становится более актуальным на современном этапе глобальных мировых разработок. Знание приобретает мировое содержание благодаря интернету. Появляются новые научные понятия, которые проникают в язык и способствуют обогащению лексики данного языка.

В этой статье методической основой послужил ряд слов, применяемых в сфере техники. Изучение этимологических и семантических особенностей технических терминов может повысить эффективность преподавания технического английского языка и стать основой для составления словаря технических терминов.

***Ключевые слова:** технические термины, понятие, терминология, научно-техническая, информация, компьютер, смысл, создание, определение, развитие.*

H. Ghajoyan

HISTORICAL AND ETYMOLOGICAL OVERVIEW OF THE STUDY OF TECHNICAL TERMS

The following article discusses the process of creating and developing technical terms. The development of technology and science contributes to the formation of special professional and scientific terminology. The first terminological works were written not only by linguists, but also by experienced engineers who encountered imperfections in technical terminology.

The development of science required the creation of terms. It was necessary to conduct an in-depth study, to understand the origin and change in the meaning of terms used in the field of technology. The study of terminology becomes more relevant at the current stage of global development. There are new scientific concepts that penetrate the language and contribute to the enrichment of the vocabulary of the following language.

The methodological basis of this article is a number of words used in the field of technology. Studying the etymological and semantic features of technical terms, we can improve the effectiveness of teaching technical

English, and it may become the basis for compiling a dictionary of technical terms.

Key words: technical terms, concept, terminology, scientific and technical, information, computer, meaning, creation, definition, development.

Մարդիկ դարեր շարունակ ուսումնասիրել են իրենց շրջապատող աշխարհն ու երևույթները: Էլեկտրականության մասին գիտության առաջացման պատմությունը սկիզբ է առել մ.թ.ա. IV դարում, երբ Թալեսը հայտնաբերեց ձգողականության հատկությունը:

Գիտության և տեխնիկայի զարգացման ցածր մակարդակի պատճառով մինչև XVII դարի սկիզբը Էլեկտրական երևույթների մասին ուսմունքը գործնականում համապատասխանում էր Թալեսի գիտելիքներին: Էլեկտրականության և մագնիսականության վերաբերյալ առաջին տպագիր ստեղծագործությունը եղել է անգլիացի գիտնական Ու. Գիլբերտի «Մագնիսի, մագնիսական մարմինների և մեծ մագնիս Երկրագնդի մասին» գիրքը, որը հրատարակվել է Լոնդոնում 1600 թվականին: Գիրքը հրատարակվել է լատիներեն լեզվով, քանի որ XVII դարում այդ դասական լեզուն գերիշխում էր գիտության բնագավառում, և գիտական աշխատությունները մեծ մասամբ գրվում էին լատիներեն լեզվով¹:

Առաջին Էլեկտրոսկոպի միջոցով Ու.Գիլբերտը ցույց տվեց, որ թեթև առարկաներ ձգելու ունակությամբ օժտված են մի շարք նյութեր, որոնց նա տվեց *electrics* անվանումը, այսինքն՝ «Էլեկտրական մարմիններ», իսկ այդպիսի ձգողական հատկությունը նա անվանեց *electrica*, այսինքն՝ «Էլեկտրական ուժ» այսպես ածանցելով իր եզրույթները լատիներեն *electricus* բառից, որը սկիզբ է առնում հունական *electron* բառից:

Գիտության և տեխնիկայի զարգացման հետ փոփոխվում և զարգանում են հասկացությունները: Այսպես՝ *electricity* եզրույթը, որն առաջացել է *-ic* և *-ity* ածանցներից, առաջին անգամ գործածվել է անգլիացի գիտնական Տ. Բրաունի գրքում: Սկզբում *electricity* եզրույթը նշանակում էր **որոշակի նյութեր**: Էլեկտրամագնիսական դաշտի տեսության ի հայտ գալով՝ *electricity* եզրույթը սկսեց նշանակել **Էլեկտրական հոսանք, Էլեկտրական լիցք**, կամ **ֆիզիկայի բաժիններից մեկը, որն ուսումնասիրում է Էլեկտրականությունը**²:

Արդյունաբերության մեջ և կենցաղում Էլեկտրական հոսանքի գործնական կիրառման շնորհիվ *electricity* եզրույթը ստացավ ևս մեկ սահմանում, այն է՝ լուսավորության նպատակով օգտագործվող Էլեկտրական հոսանք: Էլեկտրական հոսանքի լայնորեն կիրառումը կենցաղում *electricity* եզրույթը դարձրեց համընդհանուր օգտագործման բառ:

¹ Տե՛ս *Амосова Н. Н., Этимологические основы словарного состава современного английского языка. М., 1956, с.110*

² Տե՛ս *Webster's New World Dictionary of the American Language (Second College Edition). Cleveland – New York, 1970, p. 449*

Electron եզրույթը նույնպես փոփոխել է իր նշանակությունը: 1881թ. Հ. Հելմհոլցը կարծում էր, որ լիցքը էլեկտրականության քանակությունն, որը հատուկ է առանձին ատոմների՝ այն անվանելով **էլեկտրականության հոսանքի լիցք**: 1891թ. այդ լիցքին, այսինքն՝ էլեկտրականության քանակությունը, Դ. Ստոնեյր անվանեց **electron**: Այդ ժամանակվանից սկսած՝ **electron** եզրույթը նշանակում էր **էլեկտրական լիցքի կա՛մ դրական, կա՛մ բացասական քանակության միավոր**: Դ. Թոմսոնի հայտնի փորձարկումներից հետո, որոնք կատարվել են 1897թ., **electron** եզրույթն սկսեց արդեն բնորոշել էլեկտրականության բացասական լիցք կրող մասնիկը¹: 1897թ.-ից այն սկսեց նշանակել **ամենափոքր բացասական էլեկտրական լիցքով մասնիկ**²:

Տեխնիկայի զարգացմանը զուգընթաց ի հայտ են գալիս նոր գաղափարներ և հասկացություններ: Այսպես՝ 1904թ. Նյուրնբերգի համալսարանի պրոֆեսոր Արթուր Ռուդոլֆ Վենետոն առաջին անգամ ներմուծեց էլեկտրոնիկա (**electronics**) եզրույթը՝ վերջնական եզրահանգման գալով «արագ էլեկտրական տատանումների» վերաբերյալ տարիներ շարունակ կատարվող տեսական և գիտական հետազոտություններից: «Արագ էլեկտրական տատանումները» բացահայտել է անգլիացի ֆիզիկոս և մաթեմատիկոս Ջեյմս Մաքսվելը, իսկ ռուս գիտնական Ալեքսանդր Պոպովն առաջին անգամ սովորել է դրանք կառավարել: «Արագ էլեկտրական տատանումները» ռադիոալիքներ են, որոնք միլիոն անգամ ավելի երկար են, քան լուսայինները, սակայն տարածվում են միևնույն արագությամբ: Ռադիոալիքները առաջանում են կայծակի ժամանակ, իսկ հանգիստ պայմաններում արտադրվում են արևից, որը համարվում է էլեկտրամագնիսական ճառագայթների բնական գեներատոր:

Ժամանակակից իմաստով **էլեկտրոնիկա (electronics)** եզրույթը վերաբերվում է մի գիտության, որն առաջացել է օրգանական ռադիոֆիզիկայի, ռադիոտեխնիկայի, էլեկտրամեխանիկայի, միկրոէլեկտրոնիկայի, օպտիկայի, ավտոմատիկայի և տեխնիկական կիբեռնետիկայի միաձուլման արդյունքում: Իսկ ռադիոէլեկտրոնիկան, որի հիմքում ռադիոտեխնիկան է, ուսումնասիրում է էլեկտրամագնիսական տատանումներն ու ալիքները ռադիո միջակայքում:

Ռադիո (**radio**)³ եզրույթը հոմանիշ է **էլեկտրամագնիսական ճառագայթում (electromagnetic radiation)** բառակապակցությանը և առաջին անգամ գործածության մեջ է մտել՝ ապացուցելով ռադիոալիքների առկայությունը: Սկզբում **radio** եզրույթը նախաձանց էր, որը նշանակում էր **radiant**, թարգմանաբար՝ ճառագայթային, կամ **radiation**, այսինքն՝ ճառագայթում, որն էլ առաջացել է լատիներեն **radius** բառից, այսինքն՝ ճառագայթ: Որպես ռադիոընդունիչ **radio** եզրույթն առաջին անգամ

¹ Տե՛ս **Будагов Р. А.**, Введение в науку о языке. М., 1965, с. 263

² Տե՛ս **Петров В. В.**, Семантика научных терминов, Новосибирск, 1982, с. 33

³ Բոլոր բառերը ստուգաբանվում են՝ հիմք ընդունելով անգլերենի ստուգաբանական բառարանը՝ <http://www.etymonline.com/> կայքում:

հաստատվել է 1913թ., իսկ որպես ձայնային ազդանշաններ հեռարձակող միջոց՝ 1913թ-ից: **Radio** եզրույթը կրճատվել է **radio-receiver**, **radio-phone**, **radio-telegraphy** բարդ բառերից: Գիտական երևույթների նկարագրության համար երբեմն օգտագործվում են համագործածական բառեր, որոնք կապված են մարդու, բնության, կենդանական և բուսական աշխարհի հետ: Վերջիններս իմաստային վերաձևավորման արդյունքում դառնում են եզրույթներ:

Կարող ենք փաստել, որ պատմաբանագիտական հետազոտության անբաժանելի մասն է համարվում լեզվի իմաստաբանական համակարգի ուսումնասիրումը ժամանակակից իրավիճակում: Այստեղ ևս կարելի է խոսել մի քանի գիտատեխնիկական եզրույթների առաջացան մասին, ինչպիսիք են **television**, **screen**, **antenna** բառերը: Հեռուստատեսությունը հզոր միջոց է գիտամշակութային տեղեկատվության տարածման համար:

Հեռուստատեսություն (**television**) եզրույթն առաջին անգամ օգտագործվել է ռուս ճարտարագետ-գիտնական Կ. Դ. Պերսկիի կողմից Փարիզում կայանալիք միջազգային գիտաժողովի ընթացքում: Անգլերենում **television** եզրույթը կազմված է **tele** (հունարեն բառ է և նշանակում է **հեռու**) և **vision** (որը լատիներեն **videre** բառից է և նշանակում է **տեսնել**) բառերից: Այն փոխառվել է ֆրանսերեն **télévision** բառից: Այս եզրույթը ծառայել է հեռախոսալարի միջոցով շարժվող պատկերներ փոխանցելու համար: **Telephote** (1880) և **televista** (1904) բառերը նույնպես օգտագործվել են այս իմաստով, իսկ **television set**, այսինքն՝ **հեռուստացույց** բառը կիրառվել է 1948թ.:

Screen եզրույթը, որն ի սկզբանե համարվել է կրակի ջերմությունից կամ միջանցիկ քամիներից պաշտպանող կահույքի մի տեսակ, առաջացել է 14-րդ դարում հին ֆրանսերեն «**escran**» բառից, որն էլ անգլերենում թարգմանաբար նշանակում էր **fire-screen**: Հնարավոր է, որ **screen** եզրույթը առաջացել է հին գերմաներեն **skirm** կամ **skerm** բառերից, որոնք թարգմանաբար նշանակում են **պաշտպանություն, ծածկոց**: 1859թ. այն ուներ «դռների և պատուհանների համար նախատեսված մետաղական ցանց» իմաստը:

Ֆրանսիացի ֆիզիկոս Ա. Է. Բլոնդելն առաջին անգամ առաջարկել է Պոպովին օգտագործել **antenna** եզրույթը: Սակայն ռադիոտեխնիկայի ոլորտում **antenna** եզրույթի հեղինակը համարվում է Գ. Մարկոնին: Բառն առաջացել է լատիներենից, որտեղ **antenna** նշանակում էր «**sail yard**», այսինքն՝ առագաստակալ: Ստուգաբանորեն այն փոխ է առնված հունարեն «**keraiai**» բառից, որը նշանակում է միջատի եղջյուր, այսինքն՝ «**horn of an insect**»: Ռադիոտեխնիկայի ոլորտում **antenna** եզրույթն օգտագործվել է 1902թ-ից և նշանակում է «**aerial wire**», որը թարգմանվում է որպես ակեհավաք:

Էլեկտրոնային տեխնիկայի զարգացումը նպաստում է գիտատեխնիկական առաջընթացին: 1642թ. Բ. Պասկալը առաջին անգամ կիրառում է հաշվիչ մեքենաների սկզբունքը: Իսկ 1946թ. ստեղծվում է առաջին էլեկտրոնային հաշվիչ

մեքենան: Տեխնոլոգիաների ոլորտում հիմնարար բարեփոխումների պատճառ է հանդիսանում կիսահաղորդիչների լայնածավալ օգտագործումը և անցումը տեղեկատվական հասարակության, որն էլ նպաստում է համակարգչի ստեղծմանը: Այս ամենը կարծես թե հեղափոխություն արեց ամբողջ աշխարհի տեղեկատվության, կապի, հեռահաղորդակցության ոլորտում: Այսպես, 1971 թ. ի հայտ եկավ առաջին միկրոսխեման, իսկ մարդիկ, ովքեր աշխատում էին դրանցով, սովորեցին մեծ քանակությամբ նոր բառեր: 1981թ. IBM ընկերությունը ստեղծեց անհատական համակարգիչը (*personal computer*), որն էլ ավելի նպաստեց համակարգչային գիտության զարգացմանը: Ներկայումս ամբողջ աշխարհում մեծ վերելք է ապրում համակարգչային տեխնոլոգիաների զարգացումը: Սրանով է պայմանավորված այն իրողությունը, որ համակարգչային տեխնոլոգիաների ոլորտում ի հայտ են գալիս նոր բառեր: Ծրագրավորողները օգտագործում են նոր եզրույթներ, որոնք էլ փոխանցվում են բառերի համագործածական շերտից: Անգլերենում *computer* եզրույթն այլ իմաստ էր արտահայտում: Վերջինս նշանակում էր **անձ, ով հաշվարկ է անում**, այսինքն՝ «*one who calculates*»: *Computer* եզրույթը *-er* վերջածանցի միջոցով կազմվել է «*compute*» բայից, որը համարվում էր գործողություն կատարող գոյական: Մեր օրերում *computer* եզրույթը էլեկտրոնային, թվային սարք է, այսինքն՝ «*digital electronic device*»:

Համակարգչային տեխնոլոգիաների ճնշող մեծամասնությունը ստեղծվել է Ամերիկայի Միացյալ Նահանգներում, որտեղ «Silicon Valley» կոչվող վայրում կենտրոնացված են ոչ միայն Ամերիկայի, այլև ամբողջ աշխարհի հետազոտական կենտրոնները: Այստեղ աշխատում են բազմաթիվ գիտնականներ, որոնք զբաղվում են էլեկտրատեխնիկայի և համակարգիչների ոլորտում նոր տեխնոլոգիաների ստեղծմամբ և վերամշակմամբ: «Silicon Valley» կոչվող վայրը համարվում է աշխարհում միկրոսխեմաների ամենախոշոր արտադրողը:

Ցանկացած նոր տեխնոլոգիայի հայտնագործումը նպաստում է նոր եզրույթների ձևավորմանը: Այդպիսին է կոշտ մագնիսական սկավառակ (*Hard Magnetic Disk Drive*) կամ (*Winchester Disk*) եզրույթը, որտեղ կուտակվում է տեղեկատվությունը: *Winchester* անվանումը այս եզրույթն ստացել է IBM ընկերության կողմից, երբ 1973թ. վերջինս թողարկեց 3340 մոդելի կոշտ սկավառակը: Սակայն 1990թ. *winchester* անվանումը գործածությունից դուրս մղվեց Եվրոպայում և Ամերիկայում: *Hard Magnetic Disk Drive* եզրույթի առաջացումը նոր էջ բացեց համակարգչային գիտության մեջ: Ի տարբերություն ձկուն սկավառակի (*Floppy Disk*)՝ տեղեկատվությունը կուտակվում է կոշտ սկավառակի (*disk* եզրույթը առաջացել է լատիներեն *discus* բառից) մեջ:

Քանի որ մենք իսկապես մուտք ենք գործել տեղեկատվական ժամանակաշրջան, ուստի լայն տարածում ունի **տեղեկատվություն** (*information*) եզրույթը, որի ստեղծումը վերջին գիտական հայտնագործությունները կապակցում են առօրյա կյանքի հետ: Վերջինս ունի իմաստային հստակ բնորոշում, քանի որ

ավելի անկախ է ենթատեքստից, քան համագործածական շերտի բառերը: Ենթատեքստից կախվածությունն ի հայտ է գալիս միայն այն դեպքում, երբ եզրույթը տվյալ բնագավառում ունի մեկից ավելի նշանակություն: Սրանով էլ բնորոշվում է **information** եզրույթը: Անգլերենում **information** բառն ունի բազմաթիվ իմաստներ, ինչպես օրինակ՝ 1. facts or details that tell you something about a situation, person, event, etc., 2. written on copies of letters and documents that are sent to someone who needs to know about them but does not have to deal with them 3. AmE. the telephone service which provides telephone numbers to people who ask for them; directory enquiries BrE - informational adj.¹: **Information** բառն առաջացել է հին ֆրանսերեն «informacion, enformacion» բառերից: Իսկ հետագայում ի հայտ եկան **information theory** (1950թ.), **information technology** (1958թ.), **information revolution** (1966թ.), **information overload** (1967թ.) արտահայտությունները:

Իրավիճակը կտրուկ փոխվեց, երբ 1986թ. Ազգային գիտական ֆոնդը ստեղծեց գիտահամակարգչային ցանց և այն միավորեց Advanced Research Projects Agency ցանցի հետ: Այսօր համացանցը էլեկտրոնային հաղորդագրությունների փոխանցման միջոցից վեր է ածվել հանդիպումների, հաղորդակցման, տեղեկատվության, զվարճանքի միջոցի, որի համար տարածությունը նշանակություն չունի: Համացանցի հայրենիքն է համարվում Ամերիկայի Միացյալ Նահանգները և պատահական չէ, որ **Մայքրոսոֆթ** ընկերության հիմնադիր Բիլ Գեյթսը շարունակում է պնդել, որ համացանցի լեզուն միայն անգլերենն է: **Internet**, այսինքն՝ **համացանց**, եզրույթը կազմված է երկու մասից. առաջին մասը **international** ածականն է, որը թարգմանաբար նշանակում է **միջազգային**, որից էլ վերցված է **inter-** նախածանցը, իսկ երկրորդ մասը **net** գոյականն է, որը թարգմանաբար նշանակում է **ցանց**: Հին անգլերենում **net** գոյականը, որն ունեցել է **ցանց**, **ուռկան**, **սարդոստայն** իմաստները, փոխաբերաբար գործածվելիս նշանակում էր նաև **թակարդ**, **որոգայթ**: **Net-ը** միջազգային էլեկտրոնային ցանց է, որի շնորհիվ համակարգիչների օգտատերերը կարող են կապվել միմյանց հետ, տեղեկատվություն փոխանակել տեքստերի, նկարների, պատկերների տեսքով: **Net** գոյականը համակարգչային եզրույթաբանության մեջ հոմանիշ է **web** գոյականին, որը, սակայն, որպես առանձին բառ չի օգտագործվում, այլ հանդես է գալիս բառակապակցություններում, ինչպես, օրինակ՝ **web page**, **web master**, **web server**, **web site**, **web space**, և իհարկե **World Wide Web** (այսուհետ WWW), որը թարգմանաբար նշանակում է **համաշխարհային ցանց**, **աշխարհացանց**: **WWW** - ն ի սկզբանե մշակվել և օգտագործվել է ֆիզիկայի բնագավառում համագործակցության համար: Վերջինս անհրաժեշտ էր, որպես ակնթարթային տեղեկատվության փոխանակման միջոց ամբողջ աշխարհի տարբեր համալսարանների ֆիզիկոսների համար: Այժմ **WWW-ն** ծառայում է ամբողջ

¹ *Longman Dictionary of Contemporary English, Third edition with new words supplement, 2001, p. 730.*

աշխարհում մարդկանց, երեխաների և մեծահասակների անձնական, առևտրային և ակադեմիական նպատակների համար:

Միջազգային համակարգչային ցանցի ի հայտ գալուց հետո հնարավոր եղավ նամակներ գրել ոչ թե սովորական փոստով, այլ էլեկտրոնայինով (*electronic mail*), որը կազմված է *electronic* ածականից, որի *e* առաջին տառը անգլերենում համարվում է նախածանց, ու *mail* գոյականից: Իսկ *post* բառը բացատրվում է որպես **փոստային նամակներ տեղափոխող համակարգ**: Հեծյալները և ձիերը հերթով տեղավորվում էին երթուղու երկայնքով, որպեսզի արագացնեն փոստի փոխանցումը: Վերջինիս հիմքը լատիներեն *positus equites positi* արտահայտությունն է:

Ի մի բերելով վերը շարադրվածը տեխնիկական եզրույթների ստեղծման և զարգացման ընթացքի մասին՝ կարող ենք ասել, որ եզրույթաբանական միավորների առաջացումը լեզվում պատահական երևույթ չէ: Այն պայմանավորված է արտալեզվական գործոններով, տվյալ դեպքում՝ որևէ երևույթի բացահայտմամբ, հասկացության կամ առարկայի առաջացմամբ: Որպես կանոն՝ այդ բացահայտումները կապված են նաև գիտնականների անունների հետ, որոնք ոչ միայն բացահայտել են այդ երևույթները, ներմուծել հասկացությունները, հայտնագործել առարկաները, այլ նաև տվել են դրանց համապատասխան անվանումները: Եզրույթները հիմնականում ստեղծվել են հունարենի և լատիներենի հիման վրա: Ոչ բոլոր եզրույթներն են պահպանել իրենց սկզբնական իմաստային նշանակությունը, քանի որ գիտության զարգացման հետ ճշգրտվել և փոփոխվել են անվանողականության հիմքում ընկած հասկացությունները, և համապատասխանաբար, ճշգրտվել և փոփոխվել են եզրույթների իմաստային սահմանումները:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, մ.գ.դ. Ի.Կ. Կարապետյանը :